1864.
2 Մարտի
քան հին տօմարով։

Թիւ 2.
ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ։

1864.
14 Մարտի
քան նոր տօմար

Registered at the General Post-Office for transmission abroad.

ԷՐԱՏԱՊՈՒՂԻ

ԼՐԱԳԻՐ ՄԱՆՉԵՍՏԵՐԻ

ՔԱՂԱՔԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ, ԳԻՏՆԱԿԱՆ, ԿՐՕՆԱԿԱՆ, ԵՒ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ։

Հրատարակութիւն, տպագրութիւն եւ բաժանորդութիւն դիւանն է Մանչէսթրէ։

—Նամակ, յօդուածք, դիրք եւ պահանջք (ազատ է ծախսոյ գօրպայք) ուղղին յանուն Աւագ Կարապետ Վ. Շահնազարեանց, դիրեկտոր։

M. le Chevalier K. Vardapete Shahnazariantz,
151, Rumford Street, Manchester, (Angleterre.)

Տարեկան գինն հանդերձ ծախսք գօրպայք, ուր երթան Անդիւոյ եւ Ցրանոյք ընդունուք եւ ընդիսուք, է 25 ղրշ.
—Այլ տեղերն ազատ գօրպայք ծախքն առնողք վճարեալ է։
—Վեցամսեանն . . . . . 13 „
—Եռամսեանն . . . . . 7 „
—Մէկ թերթն գինն է Մանչէսթրէ է . . . 5 „
այլուր՝ . . . . . 7 „
—Բաժանորդք դիրուին ամէն ամսոյ մէջն եւ պառնի-վճարի։

Ստորագրութեան տեղիքն են Կոստանդնուպօլիս Սարգիս Աղայ Մ. Հիսարլեանի սենեակն ի Գալաթիա. — Իզմիր Մարկոսեան Յակոբ Աղայի սենեակն. — Հալէպ Յովհաննէս Աղայ Բիւրքճեանցի սենեակն. — Սուրբ Երուսաղէմ Աստուածատուր Եսայի Վարդապետի սենեակն. — Աղեքսանդրիա (Եգիպտոս) Տէր Գասպարեան Ղազարոս Աղայի սենեակն. — Կալկաթա Սրբազան Աւագ քահանայ Տէր Յովհաննէս Խաչիկեանի և Գալատի սենեակն. — Բաթավիա Պ. Մանուկ Որդանանեանի սենեակն. — Լոնդոն Աղայ Մաքսուդովի սենեակն. Առ այժմ ուղղողներն կրնան վերոյգրեալ սենեակաց մէկէն սկսեալ մինչև որ յատուկ գործակալներ հաստատեմք բազմահայ և ընթերցասէր քաղաքներ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ։

Աղգ.—Եւրոպայի արեւելեան խնդիրն.—Մեծն Բրիտանիա. — Ֆրանսա. — Մեքսիկա. — Թուրքիա. — Աւստրիա. —Դանմարգ. — Սերբիա. — Հռոմ. — Ռուսիա. — Արեւելեան պօն է Մանչէսթրէ. — Զայն Ռուհանիոյ յօդուածն Հայոց Լեռից. — Կեանք եւ բանաւորութիւն. — Խնդրն Լուսէ — Զուարճալի. — Սահեարդեան։

ԱԶԳ

Մինչդեռ մեր, անցեալ Յուլիսի վերջն, Երկրագնդի առջի թերթն ի լոյս հանելով, եւ ամենայն ինչ մարդօրէն անօրինելով եւ յաւաջատես լինելով, խոստացանք եւ հաստատ ալ որոշելինք երկրորդ թիւն Հոգաբեմերի մէկին հանել եւ շարունակել այնպէս, քանի մի անակնկալ արգելք յերևան գալով մեր առաջադրութիւնն այսչափ ուշացուցին ի տարութիւն մեր եւ մերոց բարեկամաց եւ ամենայն բարեմիտ անձանց։

Ամեն արգելքն մի առ մի հոս յիշելն ճանձրութիւն համարելով, բաւական կսեպեմք մէկ քանին մեր ընթերցողաց հաղորդել։ Առաջին արգելքն եղաւ Լոնդոնի կենտրոնական նամակատունն։ Մեր, թէեւ կանոնաւորապէս մեր ծանուցագրին Տէրութեան մատուցեր եւ Երկրագունդ անուն հայերէն լրագիրն տպելու արտօնութիւն առացերէինք. սակայն Լոնդոնի նամակատունն մեր օրագիրն, ըստ սովորութեան երկրի, չէր արձանագրուեր (անուէ-ժիստրէ)։ Առաջին թերթն Մանչեստրի փոստային ճանապարհով վճարեցինք ամեն ծախքն, այսինքն ինչ որ պահանջեցին։ Եւ անիկա Լոնդոնի փոստան հասնելով անարգելի ընդունելութեան հանդիպեցաւ. փոստայի տեսչութիւնն մեր նորածին լրագիրն մէկ անկիւն նետեց, ուր ամիսներով տրորուեցաւ անկիւնէ անկիւն գլորուելով մի միայն փոստայի պաշտօնէից անհոգութեան, որպէսզի չքսեմ անոնց տգիտութեան պատճառաւ. վասնզի եթէ օրէնք կար, որ ամեն օրագիր հարկաւ արձանագրուէր պիտի. սակայն Այրարատայ որդին պարտական չէր Անգլոյ խառնի խուռն աւանդութիւններն ուսանիլ. և փոստայի տեսչութիւնն պարտական էր, մեր լրագիրն վար դնելէն յետոյ իսկոյն մեզ իմաց տալ. որովհետև մեր հասցէն Ֆրանսերէն անոր ճակատն գրուած էր. եւ ոչ թէ 5 շիլինի պատճառաւ մեզ այսչափ վնաս տալ։ Ինչ և իցէ, Սիրելի ընթերցողք՝ սակայն պետութեանց աղիկամի վարչութեանց վերայ մի շատ գանգտիք. անոնք անզիսութեամբ են ըստ մեծի մասին. իսկ Եւրոպա եղածներն, մեծաւ մասամբ, գիտութեամբ եւ կամաւ են։

Մինչդեռ մեր համոզեալ կինք, որ Երկրագունդն Օգոստոսին ամեն տեղ հասնելով, կրնայինք Սեպտեմբերին մեր բաժանորդաց ցանկն ստանալ եւ Հոգաբեմերի մէկին մեր ձեռնարկն շարունակել, մեր օրագիրն դեռ Լոնդոնի նամակատունն կգտնէր ակամայ։ Մեր գործակալաց նամակներէն արթընցնալով՝ յիշեալ նամակատան հետ թղթակցութիւն բացինք եւ մեր լրագիրն արձանագրելու ծախքն վճարելով ճանապարհ հանել տուինք կարծելով որ կրակէ և ջրէ աղատեցաւ. դարձեալ պատրանք? Լրագրի մեծ ծրարի հասցէն Կոստանդնուպօլիս գրած ըլլալով, Լոնդոնի նամակատան մէջ այնչափ դզդզուեր էր, որ Կոստանդինի փոխուեր էր։ Ֆրանսայի փոստայի պաշտօնեայք աղօրհայերէն գիտնալով, ոչ արուերէն՝ զայն Զէզոյրի Կոստանդին քաղաքն ուղղարկերէին։ Վերջապէս; Երկրագունդն, երեք ամիս ակամայ բանտ և ճանապարհորդութիւն ընդ ծով եւ ընդ ցամաք կրելէն յետոյ, Հոգաբեմերին հաղիւ իր տեղն հասեր էր հիւանդ եւ բարթուլորերով։ Այսէր առաջին և գլխաւոր առիթն անոր այսչափ ուշ երևելուն։

Երկրորդ պատճառն եղաւ մեր բաժանորդաց ցանկի ժամանակին մեր ձեռքն չհասնելն։ Երկրագնդի մեծութեանն և շարաթականութեան նայելով մեր 500 բաժանորդ խնդրերէինք։ Փոստայի ծախքն ալ, որ առաջ մէկ փենի էր, Անգլիան, մեր առջի թերթն հրատարակելէն յետոյ, երկու փենիի հանեց։ Թողում խօսիլ գործաւորաց շաբաթականի, թղթոյ, մրոյ եւ այլ պարագայից սղութիւնն, որ ամեն ազգայ եւ աշխարհայ մէջ առակ եղեր է։

Հետ զհետէ եւ մինչև ցայսօր մեզ հասած բաժանորդաց ցանկերն, խրախուսական չլլալէն զատ, խիստ վնասուցուցիչ են։ Արևելքն, իսկզբանէ անտի ճոխորանութեան պարտէզ համարուած է, որպէսզի չքսեմ ճոռոմաբանութեան։ Մեր ազգն ալ արեւելցի դոլով, նոյն կլիմայի դրոշմն, գոնէ, ըստ մասին, կկրէ, եւ մտաւորական, բարոյական, քաղաքական եւ դիտնական բարգաւաճանաց համար ընելիք նիւթական զոհերն տակաւին հովերով և ցամաք բանիւք կկարծէ փոխարինել։ Զգուշեմ, այլք ինչպէս կխորհին. ըստ իս, որ և իցէ ազգ և ժողովուրդ, որ Լրագիր կարդալու ճաշակ դեռ չէ ստացեր, մանաւանդ ազգային Լրագիր, ազգի էական բարեաց համար գրուած Լրագիր, անիկայ դեռ անհաղորդ է ոչ միայն քաղաքական և ընկերական զարգացման. այլ եւ մտաւորական եւ դիտնական յառաջադիմութեան. Եթէ մեր դիտուն ըլլար Պարոն Զամուռնիի պէս Զօչալ մրել և Հայերն Անդրալեռնեան ընելու գործիք ըլլալ՝ աւելի լաւ կսեպէինք ըսել. «լաւ է առն միում կորնչիլ քան բոլոր ժողովրդեանս». և գրիչնիս չարդելով՝ աւելի պատուաւոր կսեպէինք թղթոյն ձեռք առնուլ եւ պարտէզ մշակել քան ազգասանութեամբ մեր ա-

ռօրեայ կենցաղն հայթայթել։ Մեր նպատակն չէր և չէ, ամեն Աստուածպալի «լցար առաւօտու» ըսելուն տեղ՝ այս կամ այն ազգի զօրութիւնն, մեծութիւնն, կրօնն և առաքինութիւնն և այլն, և այլն, և այլն բարերանել։ Մեր, փառք Աստուծոյ, ապրուստ ալ ունինք, պաշտօն ալ ունինք. եւ եթէ կամենայինք Երկրագունդն հրատարակել. սակայն չխորհեցանք երբէք մեր ուղեղն փորել մեր ստամոքսն լեցնելու համար. այլ մեր միակ նպատակն էր և է մեր Ազգի էական բարին։

Թէև մեր ազգն ցրուած գոլով գժուարաւ կրնայ հաղորդութիւն ունենալ և Լրագիր ստանալ. սակայն կան այնպիսի կենտրոններ, որք կարող են եւ հաղորդութիւն ունենալ և Օրագիր ստանալ մեծաւ դիւրութեամբ եթէ այլ ազգայ լրագիրներն ազգայիններէն վերադաս չհամարէին և ցուրտ անտարբերութեամբ ազգային Գրագիտայ իղձն և փոյթն ջնջկոտոր չընէին։ Մեր ևս, թերևս, դեռ ժամանակն եկած չհամարելով, այլ ևս պիտի յապաղէինք մեր մտադրութիւնն ի մեծ խնդութիւն Յիսուսեանց արբանեկայ և թշնամեայ ազգային բարգաւաճմանայ, եթէ դուրսերէն եկած հրաւէրներն, մանաւանդ Մանչեստերի Պատուելի Հասարակութեան, մեր կաթողին հօտի, արդիւնաւոր ձեռնարկութիւնն մեզ սիրտ չտային, որ, ինչ մի, առ մեր նուաստութիւնն ունեցած սէրն և, ինչ մի, իր ուռանդուն ազգասիրութիւնն արդեամբ ցոյց տալու համար բաժանորդական ստորագրութիւն բացաւ եւ երկու, երեք ամսուան ծախքն հոգաց։

Վասն որոյ մեր հրապարակական գոհունակութիւնն Մանչեստերի Ազգային Պատուելի Միաբանութեանն նուիրելով Երկրագունդն այսօրուանէ սկսեալ մամլոյ տակ դնելեմք գեղեցիկ յուսոյ գարնան ակնկալութեամբ։

Զմոռնամք հոս հարևանցի յիշել որ անցեալ տարի մաշայարական ախտիւ հիւծեալ Փարիզն եւ Թրբախաս Մէճմուան Երկրագնդի արևագալն խեղկատակութեամբ լարեւեցին, որոց առաջինն 8 տարի քմայական ծախք պատրաստակ բանելով 400 տոգի չափ բանդագուշանք մրեց, որչափ որ վտեալ թոքեր կրնան ժայթքել, եւ երկրորդն արևելեան շայլարանութեամբ հաճեցաւ կատակներ ընել եւ փաշոյօրէն ձրի խորհուրդ եւ դաս տալ։ Թէև անտեղի բանակռուութիւնն ստելի է մեզ. այսու ամենայնիւ ամեն յարձակումն յարձակմամբ վանելն նուիրական պարտք համարելով՝ հետևեալ թուերս մէջ պէտք եղածն կխօսիմք։

Պարոն Զամուռճիի հետ ալ քանի մի մանր հաշիւ ունիմք, զորս կփութանք, անոր քաջարան երթալէն առաջ, աւարտել։ Երկու տարի առաջ, Դաշանց թղթոյ քննութիւնն եւ հերքումն ի լոյս ընծայելով մեք Զամուռճեանցմէ բառ առ բառ պատասխան պահանջերէինք։ Նա երկար ատեն խուլ և յամր մնալէն յետոյ, անցեալ տարի, իր պաշտպան եւ բարերար Լոյդլայէն առած արտոնագրոյ զօրութեամբն քանի մի նոր թշնամանք ուղղեց մեր դէմ։ Գիտեմ ես, գիտէ եւ ամենայն մարդ, որ հայհոյելն պատասխանել չէ եւ ոչ տրամարանել. սակայն մարդոյ համար է այս եւ ոչ թէ Յիսուսեանց արբանեակներուն... ինչ եւ իցէ. եթէ 1851 թուին գրածներս բաւական չսեպեր, 1864ին վերատին ապացուցէ կիջնամք։

Երկրագունդն, իր անցեալ տարուան Յուլիսին հրատարակեալ պայմանագրի համեմատ, ամեն պիտանի յօդուած, մանաւանդ ազգային, ընդունելու եւ տպելու յօժարութիւն ունի։ Արդ ևս կյաւելուցեմք որ ազգիր, պատուով եւ դիւաբերութիւնէ յօդուած ամենևին չեմք ընդունիր. որովհետև մեր գրաչարքն Անգլիացի գոլով՝ ամենամեծ գժուարութիւն կկրեն զանոնք չարելով. եւ թէ այն յօդուածներն, զորս չեմք տալեր, կայրեմք եւ յետս չեմք դարձուներ։

Կ. Վ. Շահնազարեանց։

Մարտի 12. 1864, Մանչեստեր։

ԵՒՐՈՊԱՑԻ ԱՐԴԻ ՊԱՂԱՔԱԿԱՆ ՎԻՃԱԿՆ։

Բելգիայոյ Լէոպոլդ արքայի Լոնդոն գալն, Ավստրիոյ կայսեր եղբօր Ֆերդինանդ Մաքսիմիլենի Փարիս երթալն Ֆրանսայի և Մեծին Բրիտանիոյ յարաբերութեանց մէջ ծնած ցրտութիւնն, Գերմանիոյ և Դանմարգի մէջ բացուած կռիւն, Իտալիոյ և Ավստրիոյ տերութեանց ըրած ահագին զինուորական ծովային և ցամաքային պատրաստութիւններն, այս է ահա, քանի մի խօսքով անցեալ շաբթուան նորալուրքն։

Գերմանիոյ 90 միլիոնի չափ ժողովուրդն յանուն ազգութեան սկզբանց Դանմարգի մէկ եւ կէս միլիոն ժողովրդեան դէմ պատերազմ բացերէ և մէկ ամիսն աւելի է, որ այս անհաւասար կռիւս կտևէ փոփոխակի յաջողութեամբ և ձախորդութեամբ։ Անգլիան և իր օրագրոյց մեծապոյնմասն խստումն, հանգուցումն, սպառնալիք և ատատ բանեցնելով չկրցան տակաւին ոչ զինադադար ընել, ոչ ալ բանակցութեան պարկեցնել կռուարարներն։ Անգլիոյ փարլամենտի մէջ անպակաս են յամախ ապարկութիւն, հարց և պատասխանի, վէճ և խորհրդածութիւններ այս խնդրոյ մասին. այլ բանիւ և գրչով միայն. գործով և իրօք տակաւին բան մի չտեսնուեցաւ. վասնզի կրսեն որ Անգլիան խաղաղութիւն կփնտռէ։ Թող հաւատա ով որ կամի այս կարծեացս։ Ըստ իս, Անգլիոյ, տակաւին պատերազմի մէջ չնետուելուն և թեղանօթով Ավստրիոյ և Պրուսիոյ յարձակումն չվանելուն Դանմարգի ամրողջութեան համար, որոյ ապահովութեանն երաշխաւորէ ինքն հանդիսաւորդաշնադրութեամբ այլ պատճառներ կան, որոց երևելիներն են՝ այս տէրութեան և Ֆրանսայի մէջ ծագեալ ցրտութիւնն, Անգլիոյ պաշտօնէից անհամաձայնութիւնն և Ավստրիոյ, Պրուսիոյ և Ռուսիոյ մէջ, եթէ ոչ գրով, գէթ իրօք նորածին միաբանութիւնն—միաբանութիւն, որոյ նպատակն է քանի մի փոքր պետութեանց սահմանագրութիւնն ջնջել, Դանմարգան բաժնել, անոր մէկ բանի կտորն Պրուսիոյ տալ, Ավստրիոյ ձեռնտու ըլլալ Իտալիա պատերազմ բանալու և անոր ոսոխն տրորելու, սոյնպէս Ռուսիոյ պատեհութիւն տալ իր զօրութիւնն Արևելքի մէջ երևցնելու։

Այս չշուն չներս, անտարակոյս, ամենն ալ ճշմարիտ չեն. սակայն լրագրի պարտքն է, զանոնք օր աւուր ժողովել և իր ընթերցողաց հաղորդել տեղեկութիւն, իրրև ժամանակի նշաններ։

Յանկարի էր որ Անգլիոյ և Ֆրանսայի մէջ առջի բարեկամութիւնն և միաբանութիւնն վերահաստատուէին, որ անցեալ տարուն սկսեալ օր աւուր կրկրանան։ Նապոլէոն կայսրն շատ պարադայից մէջ անկեղծութեամբ վարուեցաւ Անգլիոյ հետ. մեծ զոհեր ըրաւ Անգլիոյ սիրուն. այլ Անգլիա, աւելի անձնական միտքով վարուելով բան թէ փոխարինութեան ղգայմամբ, ոչ միայն Ֆրանսայի ձեռնարկութեանցն եւ խորհրդոյն նախանձորդ ըլլալով անոր կոյսեր տհամութիւն պատճառեց, այլ նաև շատ մանր տէրութիւններու անգամ խիթալի երևցաւ իր ուշադրութեամբն եւ անորոշ քաղաքականութեամբն, որով եւ իր աղդեցութիւնն օր ըստ օրէ նուազիլ սկսաւ Եւրոպիոյ մէջ։

Պրուսիոյ արքան, որ դեռ հին խելքով եւ կարծեօք նախապաշարեալ, ինքն զինքն Աստուծմէ կարդեալ իշխան կկարծէ եւ իր պետութեանն ներեւոյթ փոխանները իր հանդերձին պէս կրփոփոխէ, որով եւ իր բուն ժողովրդեան իրաւունքն ոտնակոխ ընէ, անշուշտ, Հոլշտէյնի կամ Շլեզվիգի բնակչաց իրաւունքն կամ արտօնութիւններն պաշտպանելու նպատակաւ չէ, որ այժմեան պատերազմին մէջ նետուեր է։ Աւանց նախատեսութեան ձիրք ունենալու, կարծեմք, որ անոր միակ խորհուրդն ըլլալու է Բալտիկ ծովուն մէջ քանի մի նշանաւոր նաւահանգիստ բաղաքներ եւ ծովեզերեայ ժողովուրդ ձեռք ձգել, որպէս զի իր ծովային զօրութիւնն այնպէս ուժովցնէ, ինչպէս ուժովցուցեր է իր ցամաքային զօրութիւնն։ Գուցէ թոյլատրութեամբ Անգլոյ եւ Ֆրանսայի անիկա իր ցանկութեանն հասնի. այլ ոչան (Դանմարգան) պատասխանելէն յետոյ, չատ հաւանական է, որ Անգլիան եւ Ֆրանսան ամենէն առելի զլխան իրենց դանդաղութեան եւ խոով կենալուն վերայ։

Բավիերի Մաքսիմիլենն արքան օձիկ ախտով վախճանեցաւ. և իր տղին անմիջապէս իրեն յաջորդեց Լուդվիկ անուամբ։

ՄԵԾՆ ԲՐԻՏԱՆԻԱ։

Երկրիս լրագիրներն, քանի մի օրէ ի վեր, կարծես թէ, ամեն բաղաքական խնդիր մէկ դի դնելով զրաղերեն միայն իրենց թագաժառանգ իշխանի որդւոյ մկրտութեան վերայ։ Ամենք այս ատենս, անտարակոյս հայրենասիրութեամբ արբեալ, Անգլիոն լուսաւոր աշխարհայ ամենամեծ պետութիւնն կհամարին և կյաւելուն որ օր քան զօր կմեծնայ և կընդարձակի անիկա։ Ցայսմ ատենի կցաւի Լորդերաց խորհրդարանին մէջ անցեալ երեքշաբթի եղած հակառաութեան վախճանին վերայ, և կըսէ որ անոր չվայլեր հասարակութեան կիրքն գրգռել և Անգլիոյ և Եւրոպիոյ պետութեանց մէջ պատերազմ բանալ։ Կոմս Դրէյ ըստ որ ամենչելով կարդայ Անգլիոյ և Գերմանական տէրութեանց մէջ եղած թղթակցութիւնն ի մասին Դանմարգի, որ ոչ այլ ինչ է բայց եթէ Անգլիոյ տիրակցութեան (դիփլոմասի) կրած անյաջողութեանց և անոր առաջարկութեանց դէմ եղած զլացմանց երկայն պատմութիւն։ Ասար ներհակ, Ցայսմ հան նուաստութիւն ամենևին չտեսնելէն զատ, երբէք յօժարութիւն չցոյներ որ Անգլիան կռուի մէջ նետուի. այլ կցանկայ որ ազատ Եւրոպան ընդհանուր պատերազմէ, որ ամեն վայրկենի մէջ կրնայ բացուիլ։

Մօրհիզ փոսան կշարունակէ իր անողոքելի յարձակումներն Ավստրիոյ, Պրուսիոյ և տիրակցութեան անգործութեան դէմ և կհրատիրէ Դանմարգն մինչ ցվերջն կռուիլ և հաշտութեան ոչ ինչ առաջարկութիւն չընդունիլ մինչև որ Անգլիա անոր օգնութեան երթայու պարտաւորի։ Կոնստիտիւսիոնելն (Փարիզի) նոյն նիւթի վերայ խօսելով կզարմանայ որ Անգլիա մինչև յայդ Դանմարգին օգնելու չգնայ և կսպասէ որ անիկա բոլորովին ապառի այս անհաւասար պատերազմիս մէջ։

—Պ. Դիզրայելի Հասարակայ Խորհրդարանին մէջ հարցուց Լորդ Փալմերստոնին թէ Գերմանացիք մտե՞ր են Յիւդլանդ—այո, պատասխանեց ազնիւ Լորդն, և բոլորեց անոնց Եյդեր գետանդին անցնելուն դէմ և.յաւելցուց որ անոնք Դանմարգի անկախութեանն կսպառնան, և Կոլդինգ առնելն բաւական չսեպելով Ֆրեդերիսիայի ալ տիրել կխորհին որպէս զի մէկ կողմն Շլեզվիգի դրաւումն ապահովցնեն և միւս կողմն վրէժ խնդրեն Դանմարգէն Գերմանացւոց նաւերն բռնելուն համար։

Գերազանցութիւն

«Շատ ժամանակէ ի վեր Հռոմ քաղաքն սպառնութեանց խիստ դաշտ եղեր է, գիշերային տնահատութիւններ, եկեղեցականութիւններ տասներով կհամարուին։ Գողերն երկու համեստ քաղաքացւոյմէ մէկ մեծ գումար յափշտակելէն յետոյ հասարակաց ճամբուն վերայ մոռթեցին զանոնք շարաթ օրն, առաջի 20ին, երեկոյեան եօթն և կէս ժամուն, քաղքի ամենաբազմամարդ և ամենաբանուկ փողոցին մէջ. այս է ահա վերջին անցքն, որ սոսկմամբ և ահուդողով լեցուց մեր բոլոր ժողովուրդն, որ և խիստ ողբալի ճարտասանութեամբ կապացուցանէ հասարակաց ապահովութեան չափազանց տկարանալն։

«Քահանայապետական վարչութիւնն երկու ոստիկանութիւն ունի. սակայն երկուքն ալ կամ դողակից են կամ մի միայն զբաղեալ լրտեսելու և չարչարելու զնա, որ կհամարձակի հայրենիք կամ բարւոք վիճակ ունենալու իրաւունքն լոկ յայտնել, չեն կամիր, չդիտեն կամ չկարեն ամենակաւարութեան առաջին պարտաւորութիւնն կատարել, այսինքն է, քաղաքացոյ ստացուածքն և կեանքն պաշտպանել։

«Տասն եւ հինգ տարի է ահա՛, որ Ֆրանսա Հռոմի մէջ զօրք պահելով ոտնակոխ կընէ Հռոմայեցւոյ իրաւունքն և թոյլ չտար անոնց ինքնին իրաւադատ ըլլալ փոթերաներու գէշ վարչութեանն։ Դուցէ զօրութեան չարաչար կիրառութիւնն է կամ թէ Տէրութեան ծայրագոյն պարտքն, որ Հռոմ Ֆրանսայւոյ զօրք կեցուցեր է, այսու ամենայնիւ, ասոնք աւազակութիւններն և անօրինակ մարդասպանութիւններն անպատիժ թողուլ իրենց վերայ կառնուն վատահամբաւութեան մէկ մասն, զոր հասարակաց կարծիքն, այսպիսի իրողութեանց համար, փոթերայից վարչութեան երեսն կնետէ, զոր Ֆրանսայւոյ զօրքն քսան հազար սուինով յամառութեամբ կպաշտպանեն։

«Այսօր Հռոմայ ժողովուրդն ամենադժբախտ եւ ամենայուսալի պայմանի մէջ է սոխալուած ըլլալով իր կենաց և գոյից պաշտպանութիւնն խնդրել օտարէն, որ անոր ազատութիւնն կյափշտակէ. սակայն զէշութիւնն յետին ծայր հասեր է և հարկն օրէնք չճանաչեր։

«Հարկ է ուրեմն, Զօրավար՝ որ ազգային կոմիտէն Հռոմայեցւոյց զգայմանց թարգման հանդիսանալով, առ ձեզ դիմէ և ձեզմէ յանուն պատուոյ և մարդկութեան խնդրէ որ կամենաք դնել հասարակաց անդորրութեանն խնամք տանել։

«Հռոմ ապաստանարան եղեր է Բուրբոնեանց, դալոսիք զինուորաց և բոլոր ազնարէն դրսէն, որ անոր պարսպին մէջ կվազեն Եկեղեցւոյ Գլխոն պաշտպանելու պատրուակաւ։ Այս անկուր բարբարոսութիւններս և արդի գործած ոճիրս տեսնելով հասարակաց ձայնն ոչ զոր չամբաստաներ բաց ի այն դարշելի հիւրերէն։

«Ընկալարուք, Զօրավար՝ խորին յարգանաց յայտարարութիւնն, զոր ձեզ կմատուցանէ

Հռոմայ Ազգային Կոմիտէն

Հռոմ. 22 Փետրվարի 1864։

ՌՈՒՍԻԱ

Ռուսիայէն կգրեն. «Անգլիոյ առաջարկեալ խորհրդակցութեանց (կոնֆերանս) չընկալուեն հոս տիւրբ տրճաղանք գտան։ Լրագրներն կսնդեն որ Ռուսիա յօժարամիտ ընդունի պիտի այն խորհրդակցութիւնն. բայց կվախիմ որ այս յոյս շատ կանխահաս չըլլայ։ Դարձեալ այնպիսի տարբեր գաղափար կնայեն այս խնդրոյս վերայ, որ սակաւ կարելի է թէ ըստ առաջնոյն եղած գումարմանէն ինչ և իցէ լուծումն ելլէ։ Ֆրանսա եւ Անգլիա կամին որ Դանմարգի արքան դքսութիւններն պահէ իր իշխանութեան տակ նաև ռազմական միաւորութեամբ։ Աւստրիա հաճութեամբ կընդունի այս կարգաւորութիւնս. այլ Պրուսիա չնեղանար բնաւ եթէ կարենայ այն դքսութիւններն գրաւել։ Յետոյ կդայ Օգոստենբերգի դուքսն, որ կթարթափի միացնել Շլեզվիգ և Հոլշտէյն և թագաւորել անոնց վերայ, որոյ պահանջանացն պաշտպան է բոլոր գերմանական դաշնակցութիւնն Աւստրիայէն եւ Պրուսիայէն զատ։ Վերջապէս ամենէն աւելի իրաւունք ունեցողն կայ, որ է Դանմարգի արքան, որ չուզեր թողուլ բնաւ իր երկիրներու ամբողջութեանն ամենափոքր մասն. եւ որ գոհ պիտի մնար իր յետին զինուորն բոլոր Գերմանիոյ դէմ մաքառելով։ Թագաւորն, այս մասին, չնայելով իր ժողովրդեան թուոյ սակաւութեանն, զօրեղ է. որովհետև բոլոր ժողովուրդն իրեն կռնակ կեցեր է։ Ի՞նչպէս, կրեսնէք, կարելի է այս չափ տարաձայն և հիմնովին հակակայ պահանջանքն միարանել։ Հոս, հաւատով եղէք, այլ կարելի լուծումն չեն տեսներ բայց եթէ պատերազմի և յաղթութեան միջոցաւ. և ամեն դի, անպատրաստակուռի պատրաստութիւն կտեսնեն։

«Լէհաստան, որ այս պատերազմէս և սակէ ծնանելիք խառնակութիւններէն մեծ բան կյուսայ, կաշխատի որ դարնան իր վերջին խաղն խաղայ։ Ապստամբութիւնն, ներսէն զրեթէ բոլորովին խաղուած Մուրավիեվի գործածած անողորմ միջոցներովն և Պ. դը Բերզի նորագ տընտեսութեամբն, իր ճիգն դուրսն կկենտրոնացնէ։ Բաւական բազմաթիւ զինեալ խումբեր կպատրաստուին Գալիսիա նաև Պոզէն որպէս զի դարձեալ բայց ելնուն սկսա, Լէհաստան արշաւեն։ Բայց Ռուսիա լուր առեր է, կհսկէ և պատրաստ է արշաւանաց ամեն փորձեր իր երկրէն վանելու. և Աւստրիա, որ սկսեր է հասկնալ բանի մի մասնաւոր յարաբերութիւն իրեն ալ ուղղակի կվերաբերի, ինչպէս և Ռուսիոյ, այժմ ազէկ որոշերէ անոր հետ միաբան գործել։ Հաւատի եմ որ գարունն շատ անակնկալ բաներ պահերէ մեզ։

«Այս անակնկալ բաներէն մէկն, որ Կոմկոսէն մեզ կգայ և կարժէ յիշատակութեան։ Միւրադարեան (1) և անոր ծայրագոյն դիւաւոր հերոս Շամիլի անկանելէն յետոյ այնպէս կիարծուէր որ այն կուսակցութեան յեղերն դրեթէ հնազանդեր էին։ Այլ ահա մէկ նոր մոլեռանդն, Անդիէն փախած, Կունտա անուն, որ Մեկրէլի ուխտաւորութենէն դառնալով սկսաւ մէկ նոր վարդապետութիւն բարոզել Զէկիր անունով, որ և Անդրկովկասի քանի մի կողմերն բիչ ատենի մէջ բազմաթիւ նորընծաներ ստացաւ։ Այս աղանդս, որ նոսա նորոգուած բարեպաշտութեան երևոյթ ցոյց, զիմանին շուտով նետեց, զինուորական հրահանգով կարգաւորեցաւ և հաստատեալ կարգի և տեղական իշխանութեանց դէմ զրեթէ թշնամական երևոյթներ ցոյց։ Տերեկի նահանգի զօրաց հրամանատարն արժան համարեց այն ատեն Կունտա և անոր տեղապահներն բռնելու հրաման հանել։ Հրամանն կատարուեցաւ։ Կունտա, անոր եղբայրն և հինգ երեւելի դիւաւորներ բռնուեցան և թանձր պահպանութեանց ներքոյ Սեվրաստապոլ (դուցէ՝ Սուավրապոլ) տարուեցան որպէսզի Ռուսիա բնակեցնեն։ Զիկրիտներու (նոր աղանդաւորաց անունն է) մէջ սաստիկ զրդիռ պատճառեց իրենց մարդարէի կալանաւորութիւնն.— և մէկ առտու 3,000 հոգի ելելով Զեչեն գաւառի Շալգարստոս գիւղէն, դաշտն ի բերանի և թուր ի ձեռին, թափեցան իշխան Թումանովի հրամանի տակ եղած Ռուսայ բատալիոններու վերայ։ Անոնց յարձակումն այնպէս սաստիկ եղաւ որ բազմաթիւ ատիճանաւորք և զինուորք վիրաւորեցան, բայց քանի մի հրացանագրութիւնք մնացին և ազէկ նետուած շատ մարդ սպանեցին անոնցմէ, զորս բոլորովին ցրուեց Խազախայ թնդանօթն, որք արշաւանաց զանոնք հալածելով մանրադնդակաց (վիտրայլ) անոնց հոգին սպառեցին։

«Այս ձախորդութիւնս մէկ վայրկեան Զիկրիտներու եռանդն պրպեցուց. այլ ոչ խարտաշնչեց։ Իսկոյն կարգադրութիւններ ըրին անոնց այլ տեղ հաւքուելու, մանաւանդ Կունտայի փախչելու առջևն առնելու համար. վասնզի այն ատեն տիրապէս վտանգաւոր են, երբոր սրտոտ առաջնորդ ունենան. մինչև այժմ ոչ ոք արժանի եղաւ բանտարգելալ մարդարէի ժառանգութիւնն ստանալու . . .։

Ն. Կ. Բ. Մեծ Դուքս Կոստանտին Կայսեր եղբայրն և անոր նախկին տեղապահն Լէհաստանի շուտով կոստասուի Պետերբուրգ, ուր իր Մեծ Ծովապետի և ծովու Պաշտօնէի գործակալութիւնն յանձն պիտի առնու։ Այս լուրս դեռ հաւակեալ չէ. սակայն անոր ճշդութեանն երաշխաւոր եմ։ Այսպէս կպատասխանուի այն ամեն չշունչներուն, որոց նոսելով, Մեծ Դուքսն իր Օգոստոսին եղբօր աչքէն ինկած պիտի ըլլար։

ԱԶԳԱՅԻՆ ՏՕՆ Ի ՄԱՆՉԵՍՏԵՐ

—o—

1413երորդ տարեդարձ նահատակութեան Սրբոյ Վարդանանց—Ղևոնդեանց։

—o—

Փետրվարի 27ին Մանչեստերի Պատու ելի Հայ հասարակութիւնն Սրբոյ Վարդանանց — Ղևոնդեանց 1,413 երորդ տարեդարձի տօնն հանդիսաւոր պատարագաւ, հոգեհանգստիւ և ազգային ճաշիւ կատարեց։ Նոյն երեկոյին հոգաբարձութեամբ Աղայ Պօղոսի Ստեփանեան վայելուչ սեղան պատրաստուած էր, ուր ազգային գոյթանութիւնն միարանուեցաւ. և ընթրիքն յետոյ մեր նուաստութիւնն հեռեւեալ ճառն խօսեցաւ։

Մեծարգոյ Աղներ՝

Նախախնամութիւնն ազգերու ամանց տարեդրոյ մէջ իր պաշտպանութեան դրոշմն այնպէս տրպաւորերէ, զոր պարզ աչօք անդամ կարելի է նկատել։

Հայաստան, մարդկային ազգի կրկին խանձարուրն, Հայաստան, ուր առջի անգամ Յաւիտենականի և մարդոյ մէջ մշտնջենաւոր հաշտութեան ուխտն դրուեցաւ, Հայաստան, մեր դժբախտ. այլ միշտ կանթգին հայրենիք, այս շնորհնայս արժանացաւ։

Չինգերորդ դարն, մեր ազգի նկատմամբ, յիշատակութեան արժանի դար է, եթէ մեր նախնեաց ցոյցած վեհմտութեանց մասին և եթէ անոնց ըրած զոհերուն։ Այն ինչ, մէկ կողմէն, Մեծն Ներսէս, Պարթևն Սահակ, Մեսրոպ Վարդապետ և Սահակ Բագրատունի մեր ազգն հոգևոր և մտաւոր լուսաւորութեամբ, գրաւորութեան և գիտութեանց ուսմամբ, և մեր երկիրն ապրուստոյ, հիւանդոյ, որբոյ և օտարաց պատսպարաններով կզարդարէին. միւս կողմէն, կործանեալ կապաշտութեան աստ և անդ սրահուած մնացորդքն ազգ-

վերայ հսկել։ Անոնք 12 են թուով և իրենց ազգայիններէն կընտրուին։ Եկեղեցին և ուսումնարանն կվնասեն և դատաւորի պաշտօն կվարեն։

Հայերն Արևելեան ուղղափառ հաւատը կպաշտեն։ Անոնց եկեղեցւոյ ծայրագոյն պետի տիտղոսն է Կաթողիկոս, և Էջմիածին կնստի ի Հայաստան։ Բայց ի նմանէ ունին նաև Պատրիարքներ Կոստանդնուպոլիս և Երուսաղէմ։ Անոնց աստուածային պաշտամունքն Ռուսինոյսմէ քիչ կտարբերին։ Անոնց Եպիսկոպոսներն պապական Եպիսկոպոսներուն պէս թագ ունին, որ է հին Պարսից խոյրն (?)։ Անոնց քահանաներն բոլորովի ականակալ ոսկեպատ սաղաւարտ ունին և վանքոս մի և նոյն նեթէն, երկուքն ալ կդիւրեցնեն նախնի մովսիսականութեան քահանայական զարդերն։

Եկեղեցւոյ մասն է տղոց ուսումնարանն, ուր կմատակարարեն հայերէն, ֆրանսերէն և ռուսերէն լեզուներ։ Աշակերտաց թիւն 60ի կհասնի։

Վաղարիոյ Հայերն ամեն քաղաքական իրաւունք կվայելեն և բուն տեղացի համարուած են։ Մոլդավիա բնակողներն իրենց մէջ իրենց բուն երկրի լեզուն կըխօսին։ Վաղարիոյ Հայերն թիւրքերէն կխօսին բայց Հայոց գիր կվարեն, ինչպէս նոյն Իշխանութեանց Հրէից շատ Եբրայեցի տառերով գերմաներէն կգրէն։ Ռումանիոյ բոլոր Հայերն կամ վաճառական են կամ արուեստաւոր։ Աղստարհէտից պարապող շատ սակաւ անձինք կան։ Անոնց կնիկներն թէև թրքուհեայ պէս վսկուած չեն. այլ հագիւ դուրս կելլեն. և Արևելքի կանանց պէս վսիկասէր են սակաւ մի։

Անոնց գեղեցկութիւնն իրաւամբ կգովեն, որ ամենագեղ ազգերու ազնուրութիւնն կյիշեցնէ։ Անոնք պճնասէր են և իրենց զարդուց համար մեծագին պատառներ և շողշողուն գոյն կխնդրեն։

Անոնք են այս զարեղ և գեղեցիկ ցեղի գլխաւոր յատկութիւններն, որ Դանուբեան իշխանութեանց և բոլոր Արևելից արդի քաղաքակրթութեան մէջ ազգու գործ կգործէ։»

ԽՍԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Պ. Թարլ Բրայսն Պարսից ծոցէն Փետրվարի 9 թուով հեռագիր լուր կուղարկէ Անգլիա որ Հնդկայ հեռագիր պարանի առջի մասն 450 միլ երկայնութեամբ Գվադելէն սինչև Մուսենդոմ ծովու տակն իջեցուցին։ Պարանն ողկ վիճակի մէջ է եւ խիստ լաւ կբանի։ Երկու այլ նաւեր Բուսրայի հասան հեռագիր պարաններով բեռնաւորեալ, որք 15 օրէն սկսեն պիտի ընկղմեալ երկրորդ մասն դէպ ի արևմուտք գնալով կամ Մուսենդոմէն դէպ ի Բուշեհր. երրորդ և վերջին բաժինն Բուշեհրէն մինչև Բասրա պիտի ընկղմեն շուտով։—Հեռագրի երկայնութիւնն է 1,225 միլ։

Հավրի Լրագիր

ԲԱՆԱՄԻՐԱԿԱՆ։

Պ. Ժիլ Գաղլիացին, որ Ռուսաց կայսեր մատենագետն է և աստիճանաւ զօրավար, բաղմահմուտ մէկ ճանապարհորդութիւն հրատարակեց ի Փարիս 1859 թուին «Նամակներ ի վերայ Կովկասու և Խրիմի անուամբ»։

Գործն շատ մաքուր տպեալ է և պատկերազարդ։ Հայաստանի և Հայոց վերաբերեալներն անկէ բաղելով՝ մեր ընթերցողաց կհաղորդեմք։

«Որքան բան կարելի է յառաջ բերել այս ղեղեցիկ երկրիս (Հայաստան և Վրաստան) մէջ։ Հայոց տարրն, ուշիմ, գործունեայ, հաստատամիտ (որ անոր ստորոգելեաց մէկն է) երեւելի գործունէութիւն կրանեցունէ։ Այս նշանաւոր ազգս կձգտի իր ազդեցութիւնն և ճոխութիւնն աւելցունել հոն։ Բայց և այնպէս, չնայելով համակրութեանցն, որոց արժանի է նա, կցանկայինք, որ անոր միակ և բացարձակ ազդեցութիւնն չըլլար. այլ յօդուտ երկրին, Ռուսաց և դուրսի աշխարհներէն հրաւիրեալ տարերց ազդեցութիւնն նոյնպէս ի կշիռ մտնէր.....»

«Դոր Թիֆլիզի մէջ և անոր եւրոպական բուլվարդին վերայ ասիական տարրն չբեղապէս ինքն զինքն կերևցունէ։ Որ շատ նշանաւոր զոլով, անկարելի է լուութեան տալ։ Խօսելիս այն տան, լաւ ևս, այն պաղատէն համար է, զոր մէկ ճոխ Հայ չինեց»։

Դուրսէն, կէս մի ասիական, կէս մի եւրոպական է չէնքի երեւոյթն, աւելի եւրոպական. սակայն ներսէն Ասիան հոն կերևի իր ճոխ զարդովն ըստ ոճոյ Թրքաց և Պարսից։ — Զմեան և սամովան պարապէզներ, սաղրախտներ, շատրուանք, գեղեցիկ տնկիք, բեռչկեր, ճեմելիք, օթարաններ, երգոց եւ այլ տաճարներ, սենեակներ, մենաբաններ, վայտեայ բանդակեալ գործք, լուսապատուհաններ, որոք և առատաղբ հայելեօք վսղիրգեալ, նոյնպէս և դարակք, և ամեն առնոյմէ զատ, իրրեւ զարդարանաց պարագայք, կիսողվարդն Հնդկայ եւ Պարսից խալիներու, շալերու եւ պատառներու աչքի զարնող և խառնիխուռն գոյներու խտզտեցուցիչ ցոլմունք։ — Ահա ինչ որ տեսի այս պալատիս մէջ, որ, մեծ եւ փոքր, յիսուն սենեակէն աւելի ունի։ Ապահով չեմ, որ Պարսից այժմեան Շահն այսպիսի գեղանի բնակարան ունենայ»։

«Եւրոպա սոսալիսի մէկ պալատ հարկաւ անհուն դրամ կարժէ։ Թիֆլիզ, ուր եւրոպական կենցաղավարութեան պիտոյն չարաչար սուղ են, սակայն ուր ասիական կենցաղն տակաւին արժան է, այս պալատիս տէրն, որ աղէկ խելք ըրեր է հոն ի գործ ածել միայն թուրք եւ պարսիկ ճարտար մշակներ, որք Կովկասի միւս կողմն կգտնուին, համեմատաբար շատ սակաւ դրամ մսխերէ։ Հանդերձ այսու ամենայնիւ միլիոնի տերջ հաճոյք է այն, ըստ որում ինձ 400,000 ռուբլի ըսին, այսինքն 1,600,000ֆ»։

Իրրև կանխատես կալուածատէր, արտաքին տեսքն չէ մոցեր, որ չխափանուելու համար, առաջունէ գներէ չրջական։ Տանն զարդարանք է. պալատի եռե ի կողմն կբարձրանայ Սուրբ Դաւթի լեռն, որ անոր ստանիճներուն ջուր կմատակարարէ եւ շատրուաններն կխաղցունէ։ Շէնքի ճակատն գեղի կողմն է եւ տանն, որ բաժնուած է մեծ տարածութեամբ, ուր կարելի է այլ մի եւս պարտէզ շինել, կրպակներն են, ուր վարձամ Հայն կարող է մէկ նոր բաղար կանգնել. սակայն ի՞նչ ընէ պիտի այս պալատս, ուր արքայ ոմն կրնայ բնակիլ. այս իսկ է, զոր ես ինքնին կհարցնէի։ Գուցէ ասիկա իր դաղտնիքն է. ասա թէ ոչ, իբրև հաճոյք, մեծ շռայլութիւն է եւ ընտիր ճաշակ»։

«Այս Հայս, որ պակուած է եւ անժառանգ, Արշակունի կըսուի եւ Թիֆլիզի վաճառականաց գլխաւորն է, երևելի քաղաքացի կոչումն ունի. եւ իր ճոխութիւնն շահերէ Սալեանի ձկնատեղին։»

«Հոգտեմբերի 1/13ին գնայի ննջել Կօդա, որ Երեւան երթալու ճանապարհի փոստայի առաջին հանգոյցն է, ուր կերթան Կուր գետի ալ կողմին հեռիէն հետեւելով։ Հոն տեսի որ մէկ պաշտօնեայ ինչեր էր այն սենեակն, զոր Կովկասի փոստայի հանգոյցներու մէջ, ամեն տեղ կանուանեն «զօրավարայ սենեակ»։ Ցիշեալ պաշտօնեան Դաղստանէն, այսինքն Թէմիր-Խան-Շուրի կողմերէն կգար հանդերձ իր գնդի մէկ խմբովն (Ամուր հետեւակ) զոր Թիֆլիզ կտանէր։ Շամախիէն անցնելով ճանապարհն 7—800 վերստ է»։

«Այս երբ խմացաւ «իմ ատիճանս» առ հասեստութեան կամեցաւ ինձ թողուլ այն սենեակն. «ոչ, պատասխանեցի, եկէք, միատեղ ընթրիք ըներմք»։ Անոր խմացուցի իմ պաշարս. նա ալ իրենն ինձ խմացուց, որոց մէջ կային Շամախիի պատուական նուներ։ Ցեղեկացայ որ տենդ ունէր, որ Կովկասի ահաւոր թշնամին է։ Ուստի հաղորդեցի անոր Կրեչէտովկի զօրավարի հրչակաւոր նուխասն (այսինքն ամ էկս զօլոտնիկ կամ մէկ բաւորդ դեկադրամ քրնին, էկս զօլոտնիկ կամ մէկ բաւորդ դեկադրամ հալուէ կամ ալէս, երկու զօլոտնիկ կամ մէկ դեկադրամ սամովարիկ աղ. հալեցուր օղիի մէջ եւ խմէ՝, որ շատ զօրաւոր դեղ է տենդի դէմ)։ Մինչ նա զայս կօրինակէր ես ալ իմ քաղաքական ծանօթութիւնս ներս կարգի կդնէի։ Ոչ ապագան խմացայ, որ սենեկիս ընկերն այն քաջարի ատիճանաւորներէն մէկն է (Կապիտան Բելկի), որ երկարատեւն Կովկասն ճնշողով ընտելացեր էր այն ամեն դիպուածոց, որոց ենթակայ է զօրն Ռուսաց։ Նա շատ պատերազմներ մղեր էր Դաղստանն եւ մանրամասն տեղեկութիւններ տուեց ինձ Շամիլի այժմեան ապաստանարանին, Լէզկեաց չէներու եւ անոնց կուսելու եղանակին վերայ»։

«Մինչ ես կգրէի, նա մէկ փոքրիկ հատոր կը կարդար։ Խնդրեցի անոր աղօթագիրքն տեսնել։ Այն էր «Հրահանգ պաշտօնեի», զոր մեծանուն մատենագիր Միլիւտին զօրավարն գրեր էր Կովկասի զօրաց համար, որոց տեսչութեան գլխաւորն է։ Այս գիրքս պատուական տեղեկութիւններու կատարեալ համբար է»։

«Խեղճ Կապիտանն մեծ խնամք ունենալով իր խմբի վերայ, սաստիկ կցաւէր ճանապարհին հիւանդանոցներն թողելուն համար իր քանի մի գինուորներն։ «Այսքան հոս, այնքան հոն, կըսէր նա, ի՞նչ պիտի խորհին»։ Զնա քաջալերեցի ըսելով «կլման է, որ տենդ կպատճառէ, դու ի՞նչ յանցանք ունիս»։ Նա հագիւ կվերթարուէր։ Մխոքս մէկ բան ծագեցաւ. «երբ Թիֆլիզ հասնես, դնա՛ խակին, ըսի անոր, եւ Միլիւտին արժանաւոր զօրավարն տե՛ս. նա հանճարեղ է, բարի եւ հայրախնամ։ Պատմէ՛ անոր որ դու սենեկի

Պիտի շարունակուի

ԿԵԱՆՔ ԵՒ ԲԱՆԱՒՈՐՈՒԹԻՒՆ.

Ուղեղի և անոր յետին կողմի յատուկ պաշտօնն. — բնական ազդումն, խմացականութիւն, միտք։

Տեսանք որ ինչպէս զգայումն շարժմանէն զատ է, որ այս եարինս ողնաշարի ծուծի առջեւ եղած խուրձերուն մէջն է, եւ երկրորդն անոր ետեւի կողմի խուրձերուն մէջն է. այսպէս ալ կենդանութիւնն բանականութենէն զատ է։ Կեանքն այն երկնցած ծուծին մէջն է. զոր հանդոյց կենաց կըսեմք։ Բանաւորութիւնն, ընդ հակառակն, հանդերձ իր բոլոր կարողութիւններովն ուղեղի բարձրագոյն կամ կիսագունդերու մէջն է, զորս Պ. Ֆլուրենս հարազատ ուղեղ կկոչէ։ Այս իրողութեանցս մէկ ակն յայտնի փորձն, որ և մեծ զարմանք կբերէ, այն է, որ եթէ մէկ կենդանիի ուղեղի երկու բլթակն հանեն, նա իր բոլոր ցանկութիւնն և կամքն կկորանցունէ. տեսնելու, լսելու, զգալու

կարողութենէն կղրկուի եւ անշարժ և ապուշ կըմնայ, սակայն իր զգայականութիւնն և շարժակա-նութիւնն չկորսնցուներ։ Այս երկու կարողութիւններս միայն կրնան անոր։ Եթէ, օրինակի համար, կամիթեն գնա, կրնայ յաւէն ազատիլ, եթէ անոր կոկորդն կերակուր դնեն, իր գնդերքն այնպէս կշարժէ, որպէս թէ կուզէր զայն կլլել։ Պ. Ֆլուրենս այսպէս պահեց մէկ հաւ, որոյ ուղեղն հաներէր։ Ոչ միայն կենդանին շատ ազէկ կմարսէր, այլ հաւանականաբար շատ ալ ապրէր պիտի, եթէ անոր տիրոջ սակայն չուն չատիպէր զայն գլխել։ Պէտք է միտ դնել միայն որ, ինքնիրեն մնացած ատեն, և ամեն բնական ազդումն կորուսած՝ գլուխն իր թեւին տակ կդնէր և քնանար կամ կատարեալ թմրութեան եւ անզգայութեան վիճակի մէջ կմնար։ Անոթութենէ մեռնիր պիտի եթէ խնամք չտանին եւ կերակուր չհրին անոր բարձիկին մէջ, որքան որ անոր պիտանի էր։

Ուրիշ տեսակ նշանաւոր երեւոյթներ ալ կտեսնուին այլ կենդանեաց վերայ, որոց բլթակներն հանուած են։ Այս գործարանս հանուելուն պէս, կենդանին իր կեանքն կամ իմացականութիւնն կորուսելուն տեղ, որբեալ մարդոյ պէս անկարգ շարժումներ կընէ։ Կարծես թէ հաւասարակշռութեան զգայումն կորուսեր և շարունակ կերերայ։ Բայց և այնպէս իր ոտքէն եղած վնասներէն խոյս կտայ և ինքն իրեն ազէկ կերակուր կուտէ։ Կկարծուի ուրեմն, որ ուղեղի բլթակներուն մէջն է շարժմանց կարգաւորութեան կամ դաշնակի աթոռն։ Եւ երբոր մարդ իր չարաչար խած զգիտաւոր ընկերներուն ներգործութեամբն կդողդոջոյ, ասոր պատճառն, հաւանականաբար այն է, որ անոր ուղեղի բլթակներն ըստ մասին եւ տեղ ամենակեայ կերպիւ կհաշմեանան, երբ որ արիւնն այսպիսի չարաչար կիրառութեան պատճառաւ դլուխն ի վեր ելլելով՝ բլթակներս վերայ կներգործէ։

Զարմանալ. եթէ ձեռքով ուղեղն սխմուի, երբ մէկ վիրքով գանդն բացուած ըլլայ, լուն կպատճառուի։ մասնելու և կամենալու կարողութիւններն անդիմադրելի կերպիւ կջնջուին եւ յիշողութիւնն կկորսուի։ Այսպէս կներգործէ կամ ասանն, որ զայն բաղադրող արեան հոսանքն կամ ջարդուած մասն կամ գնդակ և այլն։

Մեր գնեմք դարձեալ որ ուղեղի բլթակն և կիսագունդերն բոլորովին անզգայ են, թէև իմացականութեան և շարժման համար ալ ամենակարեւոր են։ Այսոր համար կենդանի մը ցաւի նշաններ ամենեին ցոյց չտար եթէ անոր գանգի խոռոչին մէջ եղած գործարանն բացուի, եւ անոր երկու մասերու մէկուն մէջ սուր բան մը խրուի։ Բայց այսպէս չըլլար եթէ այլ մասերուն գպչուի, օրինակի համար, գլխի (գալչայ) շրջերպատիկ գնդերներուն կամ ողնաշարի երկնցած ծուծին։

Փորձերն, որոց վերայ խօսեցանք, բաւականապէս կատարացուցանեն, որ շարժում՝ գլխամասողն միայն կամին չէ, ըստ որում՝ յատուկ ուղեղի, որ կամքի սիմուն է, թարգումն, շարժման բնաւ արգելք չըլլար։

Եթէ յատուկ ուղեղն իմացականութեան աթոռն է, հարկ է այն ատեն այս օրէնքս յառաջ բերել, որ եւ փարձով ալ հաստատուած է եւ ընդհանրապէս ընդունուած։ Որ և իցէ կենդանիի իմացական կարողութիւններն անոր ուղեղի քանակութեան համեմատ են։ Այս կարողութիւններս այլ և այլ անուններ ունին, զորս շատ անգամ իրարու հետ կշփոթեն, եւ զոյս հարկ է իրարմէ զանազանել։ Ապարին ատորին կենդանի կկոչեմք զանոնք, որք բնական ազդեցութիւն միայն ունին։ Սարդիոպատայն, օրինակի համար, որ շարժիլ սկսելուն պէս այնպէս աղէկ իր կտուն կդործէ, ինչպէս յարրուները հասած ատեն, որ ունեցերէ և ունենայ պիտի իր կենայ ամեն չրջաններուն մէջ մի եւ նոյն հանճարն և մի նոյն աստիճանի մէջ, բնածին ազդեցութիւն միայն ունի։ Այսպէս են նաև շերամի որդն, մեղուն եւ այլ շատ միջատներ, որք իրենք զիրենք սընուցանելոյ, իրենց զգեստ պատրաստելոյ և իրենց հանդիստ եւ շրեղ բնակարան հոդալոյ սրանչելի կարողութիւնն ստացեր են Աստուծմէ։ Անոնք մեզ համար կենդանի վկաներ են այն անհուն Իմացականութեան մասին, որ զանոնք ստեղծերէ, բայց սակայն չեն ստացեր ամենեին աստուածային կրակի այն կայծն, որ ստեղծուածին նախնարար առաջարկելոյ սակաւ մի կարողութիւն տուերէ։

Արդարև անկարելի է բնական ազդեցութիւնն իմացականութեան հետ շփոթել, որ անոր ամենեին չնմանելէն զատ, երբեմն ալ անոր հետ կմաքառի։ Այլ ամն բոլորովին տարբեր կարողութիւն չէ՞ մի, օրինակի համար, այն, որ շունն տեսակ մի կրթութեան ձեռնհաս կընէ։ Այն ինչ անոր բնածին ազդեցութիւնն զայն կմղէ իր որսն, որուն կցանկայ, պատառել, անոր իմացականութիւնն զինքն կդրդռէ և զայն բերել կտայ իր տիրոջն։ Անիկա տեսակ մի կրթութեան պէտք ունի, որպէսզի հաճոյոյ իր տիրոջ ամենասիրտը շարժուածին։ որ և այսու նկատմամբ սակաւ ժամանակի մէջ այնպիսի ճարտարութիւն կատանայ, որ անոր կորովութեան բաղմաթիւ օրինակներն պատմութեան մէջ շատ տեղ յիշուած են։ Անոր որսալոյ, կորսուած բաներ դտնելոյ եւ բերելոյ, համբերելոյ և, վերջապէս, խոյանականութեան եւ ճարպկութեան հազար տեսակ ճարտարութիւնն ամենեին բնածին չէ, ինչպէս ջրի չան և ծիծեռնիկի բնակարան շինելու արուեստն։ Այսոր համար անոր իմացական կարողութիւններն ալ յիշեալ կենդանեաց իմացականութենէն վերագոյն կսեպուին։

Մարդկային միտքն վերջապէս, սուանց ի բաց բառնալոյ ոչ բնական ազդեցութիւնն և ոչ իմացականութիւնն, զանոնք կվարէ եւ կպաշտպանէ։ Այն է, որ զմարդ վերագոյն կընէ, բարոյականի մասին, ամեն արարածներէն, անոր ներելով իր Արարիչն պաշտել, եւ բնականի մասին, անոր այն նվիրական ոյժն և այն պաշտպանողական հնարներն կընձեռէ, որոցմէ զուրկ կերևի։

Մարդ, ուղեղի կիսագունդերու զարգացման մասին, առաջին տեղին ունի։ Անկէ ետև են չորս ձեռանկներն և գլխիններն։ Պէտք չէ այստեղ ամենայնիւ այս կենդանիներուս, ինչպէս կապկներուն, աւելի մեծ իմացականութիւն ընծայել, զոր իրօք չունին։ Անոնց կապմութիւնն, որ այնչափ մօտ է մարդոյ կազմութեանն, շատ անգամ կտխրեցնէ զանոնք մեր շարժմանն օրինակել։ Շատ նն երբէք կարող չէ, չնայելով իր իմացականութեանն, ընկոյզ մի բանել և կապկի նման կտարել, որոյ շարժմունքն ըստ ամենայնի մարդոյ շարժուածքին նման, այնպէս մեզ զարմացումն կբերեն։

Գիշակերներու ուղեղն բլթակներու վերջին մասանց զոյուած չէ, որոցմէ ըստ մասին զուրկ են անոնք։ Ծծաւոր կրծողներու ուղեղն շատ պարզ է։ Թռչուններն ոչ բլթակներ ունին, ոչ ալ ուղեղի կիսագունդերու պատուածներ։ Վերջապէս, սողուններու եւ ձուկերու դանգի խոռոչի գործարանն միաձևութեան և երկնցուու եւ ողնաշարի ծուծին մօտենալու երևոյթ ունի։ Թէև այլ մասերն այս պակասութեանս համեմատութեամբ կըմեծնան։

Պիտի շարունակի

ԶՈՒԱՐՃԱԼԻՔ

Հաւկիթը երկար ժամանակ պահելու դիւրին կերպը։ Քանի որ նոր ածած է, ջեր. շատ ուրիշ կերպեր գործածելիք, ասկէց աղէկը չի գտանը։

"Պարոն Յակոբ՝ մէկ մեծ սուտ մը խօսէ, քեզի օրի մը խմցունեմ— Սու՞տ մը։ ես կենայս մէջ սուտ խօսած չեմ."—"Ալէքսի՝ պէր բարը վէ՛ր պուրայտ"

Բարեպաշտ կին մը իւր չորս տարեկան աղջիկը պատժած ըլլալով՝ անկողին խրկած ատենը կրսէ. "Այս գիշեր աղօթք մի՛ ըներ։ շուտով գնա՝ քնացի՛ր"։ "Պինտ աղէկ. կրսէ փոքրիկ մեղաւորը եթէ մեռնիմ ու երկինք երթամ, ու երբոր Աստուած հարցունէ, ինչո՞ւ, ես գիշեր աղօթք չըրի, պիտի ըսեմ իրեն որ դուն չի թողուցիր"։

Հայրս երկու կանգուն սև կտաւ կուզէ, հոդ չէ ինչ գոյն որ ըլլայ. և երբոր իր կոլը անցեալ շաբաթ մրթէնէ, ինչ պարագ որ ունի, պիտի վճարէ։

Աշեալ օր չորս տարեկան չարաճճիկ մը իր մեծ մայրը կրսէ. "Մամիկ՝ շաբաթ կրսիրե՞ս." միամիտ պառաւն ալ "Այո," կրսէ.— ուրեմն գնա՝ վերի սենեակէն բե՛ր, կէսը դուն կե՛ր և կէսն ալ ինձի տո՛ւր։

Մեր դրացի խաթունը կրսէր։ "Հաւկիթը սուղ եղած ատենը հաւերը չեն ածեր, ածան եղած ատենը կաչեն, ինչ զարմանալի բան է։"

Գիւղացի կին մը քաղաք կիջնայ, Հրէայի մը ակնոց գնել կուզէ. եօթ ութ հատ փորձելէն ետքը չի հաւնիր։ Հրէայն կրսէ. "աղէկ տեսակը ունիմ. բայց սուղ է" ըսելով ուրիշ մը կուտայ կնկան, որ ակնոցը աչքին կընդնէ ուրիշ հաւնի. գլխը կը կտրեն. գլխը տուն կը դառնայ ու իր էրկանը կըցուցունէ. զարմանքով կրմնան, երբոր կը տեսնեն, որ ակնոցը ապակի չունէր։

Քանի մը օր առաջ Պարոն Զենոբ, քառասուն օր պասմանաժամ ունեցող քամեալ մը, երեսուն օրվան է ըսելով պանքի մը ներկայացուց որ ըսկսնի ընէ։ Գրաղին երեսուն օրվան ըլլալը ցուցնելով Պարոն Զենոբ կրսէ. "Հիմայ Մնունդի ատենները է, նայ՝ որչափ կարճ են օրերը. եթէ ամառ ըլլար. երեսուն օր անդամ չէր տեսուիր։

Երիտասարդին մէկը օրիորդի մը կրսէ. "Սարա՝ ինչո՞ւ համար ականջդ օղ չես դներ."—"որովհետև ականջներս ծակուած չեն՝ կրսէ։—"ուրեմն ես ծակե՞մ" կրսէ. "Շնորհակալ եմ, Պարոն՝ դուք արդէն բաւական միտքս ծակեցիր։"

Օրագրագրեստ մը իր դրացարին բաւականութիւնտալէն ետքը կրսէ. "քանի մը մանր բաներ կան գլխուս մէջ. պէտք է որ անոնք ալ հանեմ." ըսէ ուզելով որ քանի մը փոքր յօդուածներ ունէր մտքին մէջ։ Գրաչարը անմիջապէս կը պատասխանէ։ "առաւել աղէկ է երթամ սրան սանտր մը ծախու առնեմ։"

Խանութպանին մէկը իր պատուաւոր յաճախորդին կը հարցունէ թէ. "ուրիշ բան մը կուզէ՞ք մի ցուցնեմ."—"Այո՛, տէր իմ՝ կը պատասխանէ.—"երկու չաբաթ առաջ հոս թողուցած մետաքէ հովանոց։"

Որդեակ իմ Յովհաննէս՝ կրսէ խանդակաթ հայր մը, որ իր որդին իրենընկեր ընելու վրայ էր. "Մեր նոր ընկերութեան անունը ի՞նչ պիտի կոչուի."—"Հայր իմ՝ կրսէ պատասխն. "չեմ գիտեր. —բայց կարծեմ Յովհաննէս և Հայր ըսուի"։ Մեր Պարոնը կատիշի սեղանագաղափարին վրայ։

Մէնեֆտեր օրագրի մը մէջ հետեւեալ ծանուցումը կարդացինք. "կուզուի ատտու մը, ինձի խրկեցէ՛ք։"

Ճշմարտախօս Պարոնին մէկը իր բարեբամին կրկայի երևայնակեցութեան վրայօր կը խօսէր. այո՛, կրսէ Սատան, ատոր վրայօր շատ բան գիտեմ. քանի օր մը մարդագեանի վրայ վերհանեն ծեր կրկայ մը գտայ. այնչափ ծեր էր, որ հազիւ թէ իր պէտը կրնար շարժել. և իր կռնէն վրայ փորագրուած էր բաւական պարզ ամեն բանի վրայօր, նաև այս խօսքերը, "դրախտ, տարի, առաջին, Ադամ։"

Բրօթեստանդ Պողոսիկը լսելով իր հօրեղբօրմէն որ բարի մարդիկ Աստուծոյ աղօթք կընեն, չէ՛. կրսէ Պողոսիկ, իմ մայրս ալ բարի է. բայց ան միշտ իր աղօթքները սեթոնին կրսէ։"

Աշխարհս մէջ առաւել արևու ճառագայթ կայ քան թէ անձրև. առաւել ուրախութիւն կայ քան թէ դատ. առաւել գմայլիլ քան թէ արտասուք. անոնք որ ասոր հակառակը կրսեն, մենք զանոնք մեր բարեկամները կամ ընկերները չենք սեպեր։ Մտքուր պիտոր, փոփոխ զգացողութիւնը ու հաճելի տրամադրութիւնը դմայլումն և սէր պայծառ կընեն ամեն տեղ. հաճելի խօսք մը տխուր սրտի մը վրայ մեծ լոյս մըն է. ո՞վ չի տեսաւ անոր ներգործութիւնը Զմայլիլ մը ամպի մը ետևէն ծագող ճառագայթին կը նմանի ան. նոր, որ աս ընդարձակ աշխարհս մէջ բարեկամ չունի կը կարծէ, սիրոյ արտասուք մը ո՛ր-չափ պայծառ կը փայլի կենաց տխուր չաղին վրայ։

Բոց.

ԱՓԵՒՏՐՈՒԿԱՆ։

ԲԱՄԲԱԿ։ Լիվերպուլ։

Եվրոպայի լուրերն մեր հրապարակին շարունակ տարտամ վիճակի մէջ պահեցին, որոյ վերայ մեծ ազդեցութիւն ունեցաւ բոլոր շաբաթն։ Հետևաբար բոլոր գործերն չարուցան եղան, գիներն ալ անկանոն և լիպրէին ¼-ն մինչև ¾ վար իջան։

Շաբաթական ծախքն եղաւ 27,160 հակ. ոչ ոքոյմէ Ամերիկայի 2,630 հակ, Գերմանիի 670, Բահիայի 430, Մարսանհամի 1,600, Եգիպտոսի 4,120, Իզմիրի և Յունաստանի 1,080, Սուրաթի 12,300, Մադրասի 930, Բանկալայի 930, եւ Զինի 1,910։

	Բամբակի գիներու տարբերութիւնն զին 1864 ամի. Մարտի 12 փենիի.	զին 1863 ամի Նոյն ատեն։ փեննի.
Ամերիկայի բամբակ	23½—26¼	21 —32½
Եգիպտոսի	21 —26½	19 —23
Զմիւռնիայի	22 —23¼	14 —17
Սուրաթի	13 —23	15¼—17½
Մադրասի	18 —22	15¼—16
Բանկալայի	11 —16	15¼—16
Զինաց	18 —19	10¾—12

ԿՏԱՒԵՂԷՆ ՁԵՌԱԳՈՐԾ ԿԱՄ ՄԱՆԻՖԱՏՈՒՐԱ ՄԱՆՉԵՍՏԵՐ

Տ ՄԱՐԳԱ.

	լայնք	լիպ.	զին լիպրէի չիլ.	փենս.	չիլ.	փենս.	եարդ
„	20×21	3	2	8	2	9	24
„	21×22	4	2	3	2	4	„
„	22	5	2	4	0	0	„
„	24×25	5	„	„	„	„	„
„	28×29	6	„	„	„	„	„
„	29	4	„	„	„	„	„
„	31×32	7	2	1¼	2	2	„
Մահուտի	26×27	5	2	5	2	6	„
„	28×29	6	„	„	„	„	„
„	31×32	7	2	5	2	6	„
ԱՄԵՐԻԿԱՆ	26×27	2½	3 2	8	2	9	36
„	26×27	4	2	6	2	7	„
„	36	4	5 „	„	„	„	„
„	36	6	2	5	0	0	„
„	38	7	„	„	„	„	„
„	39	8	2	4	0	0	„
„	40	9	„	„	„	„	„
„	42	10	2	2½	2	3	„
ԲԱՍՄԱՅԻ ԿՏԱՒ							
Մատասլամ	31×32	5½	15	6	0	0	46
„	31×32	6	16	5	0	0	„
„	32	6½	17	6	0	0	„
Փրլիտոնը	34	9	24	0	0	0	50
„	36	9½	26	6	0	0	„
„	36	10	28	0	0	0	„
ՄԱՏՄԱՊՕԼ ՇՐԹԻՆԿ							
Ձիլ հերմակ	34	6	8	9	17	6	40
„	36	7	10	6	24	0	„
Նաչուր խամ	39	9½	25	0	0	0	„
„	„	6	16	0	0	0	„
„	„	7	0	0	0	0	„
„	„	8¼	21	9	22	0	„
ՍԱՎԱՇՊՈՒՐ							
Խոպնկ	6/4	3	7	6	7	9	20
„	9/8	2½	6	6	7	9	„
„	4/4	1¾	4	3	4	6	„

ՄԱՆԱՒԱ

			զին լիպրէի չիլ.	փենի	չիլ.	փենի
Ա. տեսակ	թիւ.	12 Այս	2	6	էքսթրա 2	10
„ „	„	20 „	2	7	„ 2	11
Բ. „	„	12 „	2	4	„ 2	5
„ „	„	20 „	2	5	„ 2	6
Ա. „	„	40 „	3	0	„ 3	6

ԲՈՒՐԴ։ Լիվերպուլ և Լոնդոն։

Մեր հրապարակի երևոյթն զանդաղ է. գնողներն զգոյշ են եւ այնչափ միայն կգնեն որչափ իրենց անմիջապէս պէտք է, զոր դիւրաւ կգտնեն. բայց եւ այնպէս Թիւրքիայի բուրդերն կծախուին եւ առջի գիներն ունին։

	զին լիպրէի չիլ.	փեն.	չիլ.	փեն
Եգիպտոսի ճերմակն	1	2½	1	9
= սեւն և գորշն	0	10½	1	0½
Ալբանիայի, Վիտինի և Սկոփիայի լաւն	1	1½	1	2½
= ստորին	0	10½	0	10½
Սկիւտարիի և Սկոփիայի գառան գզաթն	0	10½	0	11
Լինկիւրիի ճերմակ Ֆիլիկ	0	0	1	2½
= ստուի կամ թիֆտիք	0	0	0	0
Իզմիրի լուացուած Ա. տեսակն	1	2	1	2½
= ճարպովն	0	7½	0	8½
Սիրիոյ ճերմակ լուացուածն	0	11½	1	1½
Պարսից և Բաղ. ստի ճերմակ Ա.	1	4	1	9
= „ գորշ Բ.	0	5	0	9
Ռուսիոյ լաւ մերինոս	1	10	2	8
= խառն (սեռիս)	1	8	2	2
Բրուվինի լուացուածն	1	2½	1	5
Դոնի գզաթն (թիֆտիք)	1	0	1	1½
= գառան	0	11½	1	0½
Զեղայի Ա. տեսակն	1	4½	1	6½
= Բ. „	1	2½	1	3½
= Գ. „	1	1	1	2

ՄԵՏԱՔՍ։ Լոնդոն։

Մետաքսի հրապարակն հանդարտ է, եւ մէկ ամսուան մէջ զգալի փոփոխութիւն չեղաւ։ Ապրանաց քանակութիւնն քիչ է. գնողներն ամենամեծ զգուշութեամբ դարձ կտանին և չարունակ վախի մէջ են, որոյ պատճառն գուցէ ձեռակերտ ապրանաց չծախուիլն ըլլայ։ Հետևաբար գիներն ալ անփոփոխ մնային։ Յեսոնի մետաքսի արժէքն ամենէն վար է։

	զին լիպրէի չիլ.	փեն.	չիլ.	փեն։
Բանկալայի Ա. տեսակ	5	0	20	0
= միջակն	11	0	14	0
Զինաստանի թիւ 1 և 2	22	0	23	6
= 3 և 4	19	0	20	6
Յեսոնի Ա. տեսակն	21	0	26	0
= միջակ և ստորին	15	0	21	0
Պարակատանի Ա. տեսակն	13	9	17	0
= միջակ	0	0	0	0
Թուրքստանի. Բուրսայի Փաբրիքա	27	0	30	6
Խուալիոյ Ա. տեսակն	25	0	28	0

ԿՈՆԹՈՒՆ—ԱՊՐԱՆՔ։

	զին խանթարի չիլ.	փեն.	չիլ.	փեն.
ՇԱՔԱՐ։ Բանկալայի կոսիփոր	44	0—48	0	
= Բենարէսի ճերմակն	46	0—48	0	
= Դատի	43	6—45	6	
= Մադրասի ճերմակն	48	0—53	6	
= Զինի և Սիամի ճերմակ և դեղինն	43	0—49	0	
= „ թոյլ տեսակն	34	0—42	6	
= Անգլիոյ կոտրածն	0	0— 0	0	
= „ 10 լիպրանոց գլուխ	0	0— 0	0	
= „ 6 լիպրանոց „	0	0— 0	0	
= Հոլանդայի 10—6 լիպր. գլուխ	0	0— 0	0	
= „ կոտրածն թիւ 1. կուլ	0	0— 0	0	

		խանթարն չիլ.	փեն.	չիլ.	փեն.
= „	թիւ 2. „	0	0—0	0	
= „	„ 3. „	0	0—0	0	
= „	VOեւBH. թիւ 1.	0	0—0	0	
ՍՈՒՐՃ (քահվէ)	Սէն Դոմինկոյին	62	0—70	0	
=	Ռիոյինն և Բահեսյին	0	0—0	0	
=	Յավայինն և Բատավիայինն	70	0—85	0	
=	Մէքքէյին կամ Եմենին	92	0—102	0	
ԲՐԻՆՋ	Բանկալայինն „	9	0— 14	0	
=	Մադրասինն „	9	6— 10	3	
=	Փատնայինն „	12	6— 21	0	
=	Առռականին „	8	0— 10	6	
ԿՈՃ (զինտիվիլ)	Յամայքի.	55	130		
=	Ամերիկէին „	44	50		
ՌՈՄ	Յամայքի դալոնն	3	8—4	8	
=	Նոր Եսեց և Հնդկաստանի „	1	5—2	6	
ՊՂՊԵՂ	բիբէր.) Մալաբարի սեւն լիպրէն		3¾	4¼	
=	Սինգալ.ի սեւն „		3¾	4	
=	ճերմակ տեսակն „		5½	6	
ՏԱՔԴԵՂ	(քահար) „		2½	2½	
ԱՖԻՈՆ	Թուրքստանի „	19	6		
ՄԱՀՄՈՒՋԻԼ	ամեն տեսակն „	0	0	0	0
ՄԱՍՏԱԿ	(մաստիքա) „	5	0	0	0
ԽԷԺ	(զամբ) Ասիոյ և Թուրք. խանթ.	65	0	95	0
=	Ամերիկէին „	75	0	80	0
ՔԻԹՐԼ	(գաղի խէժ) ամեն տեսակն „	0	0	0	0
ԳԽՏՈՐ	(մաղը) կալոդոն „	150	0	155	0
=	ճերմակ և սպէ տեսակ „	105	0	115	0
ՃԵՀՐԻ	Պարսկաստանի „ 3 լիր	10	5	լիր.	
=	Իզմիրի 0	0	0		
ԿԱՂԻՆ ՎԱՅՐԻ	(փալամուտ) Թոնոն	14	0	17	0
ՏՈՐՈՆ	(քեօք բօյա) Իզմիրի. խանթ.	48	0	57	0
=	Ադրիոյ, Ատ. իքի և Կիպրոսի	38	0	43	0
=	Բոմբայի „	26	0	33	0
ՈՐ ԻԱՆ ԿԱՐՄԻՐ	(քրմզ) ճերմակ. լիպրէն	3	3	3	4
=	սեւն „	3	3	4	0
ԼԵՂԱԿ	(ջիվիտ) Բենկալայի լաւն „	7	3	7	9
=	միջակ և ստորին „	4	9	6	6
=	Ուղին „	2	0	5	9
=	Մադրասի ամեն տեսակն	2	0	5	9
=	Ֆիլադելֆիոյ „	3	6	6	6
ՇԻԲ	գլուխ խանթ. 6 լիր.	5	6	լիր.	10
ՆՇԱԻԻՐ	„	36	0	38	
ՔԸՐԸՄ	ԹԱՐԹԱՐ ճերմակն „	10	0	110	6
=	դեղին „	100	0	105	0
=	թուխն „	0	0	97	0
ՄԱԳՆԵԶԻԱ	„	42	6	45	0
ՎԱՐԴԻ ԻՒՂ	(գիւլ եաղի) ծնյան	16	0	21	0
ՄԵՂՐԱՄՈՄ	Հնդկաստանի. Թոն. լիր.	8—9			
=	Ամերիկայի „ „	8	17	6	9 լիր. 2 6
ՃԱՐՊ	(տոն եաղը) Պետերբուրգի ус խանթ.	43		44	
=	Սեւ ծովէն եկածն „	43	6	0	0
=	Հիսպանիոյին Ամերիկայի	40	2	42	0
ԹՈՒՋ	(ինձիր) „	32	0	68	0
ՁԱՄԻՋ	Վալանսի „	28	0	33	0
=	Իզմիրի կարմիրն „	26	0	32	0
=	Սուլան Ա. „	37	0	47	0
ՁԼԹ	Կէվլեսլոյի 252 գալոն կամ թոնոն.			լիր ա	59
=	Աբեռլի և Մալթայի „			„	54—55
	Թրիեստի „			„	57
ՄԵՏԱՂՔ	պղինձ. սանի տակ „			„	115
=	Թերթ կամ Թիթեղն (չիստ) „			„	110
ՁԻՆԴ	„		26	20	10չ.
ԵՐԿԱԹ	չեղը (լամայ) Ա. տեսակն „		8	15չ.	9
=	չերտ կամ գոտի (չիմբեր) „		11	11	10չ
=	Թերթ „		12	12	10չ
ԿԱՊԱՐ	(բուրչուն) Թերթ „		21չ/10փ.		22/5
ԱՆԱԳ	(քարայ) „		116չ.		
			զին սնտուկի		
ԹԵՆԵՔԻ	ic „		լիր.	26—27	

ՏԷՐ ԵՒ ԽՄԲԱԳԻՐ Կ. Վ. ՇԱՀՆԱԶԱՐԵԱՆՑ
ՄԱՆՉԵՍՏԵՐ. Ի ՏՊԱՐԱՆԻ ԻՐՈՒՄ

Printed and published by K. Vardapete Shahnazariantz. 151, Rumford-street, Chorlton-on-Medlock, Manchester.---Monday, March 14, 1864.